Արձանագրություն N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/3-06-7» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«01» օգոստոսի 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արմեն Ասլանյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի անդամներ՝

Աղավնի Բուդուլյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Կարեն Համբարձումյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

Ավետիք Ավագյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

հանձնաժողովի քարտուղար՝

Արամ Համբարյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

Նիստից բացակայում է՝

Սարգիս Արմենակյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/3-06-7» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2016թ.-ի օգոստոսի 01-ին, ժամը 10:00-ին:

2. Տեղեկատվություն՝ գնման առարկայի ընդհանուր գնի վերաբերյալ.

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկաների ընդհանուր գները՝ մեկ թվով արտահայտված.

Չափաբաժնի համարը	Չափաբաժնի անվանումը	Գինը /ՀՀ դրամ/
1.	Սոսնձամատիտ, գրասենյակային	658 400
2.	Կարիչ, 50-ից ավելի թերթի համար	884 000
3.	Գրիչ, գելային	835 000
4.	Թուղթ նշումների համար, տրցակներով	880 000

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

Մասնակցի անվանումը (անունը)	Հասցեն, հեռախոսահամարը
«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ	ք. Երևան, Վարդանանց 110, հեռ. (010) 558483
«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ	ք. Երևան, Կոմիտաս 49, հեռ. (093)472844

4. Համակարգում 21.07.2016թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

5. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

5.1 «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

5.2 «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը (3-րդ չափաբաժնի մասով «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից Համակարգում կցված <<Աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարության>> (Հավելված 3.6) փոխարեն կցված են <<Ֆինանսական միջոցների մասին հայտարարություններ>> (Հավելված 3.4 և Հավելված 3.5), բայց, քանի որ մյուս չափաբաժինների մասով Համակարգում կցված է <<Աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությունը>> (Հավելված 3.6), հանձնաժողովը 3-րդ չափաբաժնի մասով ևս հիմք է ընդունում նույն հավելվածը):

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

6.2 «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում>>-ի (Հավելված 1), որում հստակ նշված չէ հայտով առաջարկվող որ չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքը (ապրանքները) որ երկրի արտադրության ապրանք (ապրանքներ) է (են) հանդիսանում:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

7. Մասնակիցների առաջարկած գները՝

Հ/Հ	Չափաբաժնի անվանումը	«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ					«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ				
		Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/	Ինքնարժեք	Շահույթ	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Սոսնձամատիտ, գրասենյակային	573 631,0	125 919,0	699 550,00	139 910,00	839 460	580 215	37 035	617 250	123 450	740 700
2	Կարիչ, 50-ից ավելի թերթի համար	1 034 020,0	226 980,0	1 261 000,00	252 200,00	1 513 200					
3	Գրիչ, գելային	2 031 276,67	445 890,0	2 477 166,67	495 433,33	2 972 600					
4	Թուղթ նշումների համար, տրցակներով	714 083,33	156 750,0	870 833,33	174 166,67	1 045 000	637 633,396	40 700,004	678 333,4	135 666,6	814 000

«Կապիտալ Քոնսթրաքշն» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է իր կողմից հաստատված հայտարարություն՝ Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների արտադրության ապրանք մատակարարելու վերաբերյալ:

8.Հանձնաժողովը որոշեց.

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. օգոստոսի 03-ին, ժամը 10:00-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

9.Հանձնաժողովի քարտուղարին.

Հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արմեն Ասլանյան

Անդամներ՝ Աղավնի Բոտդույան

Կարեն Համբարձումյան

Քարտուղար՝ Ավետիք Ավագյան

Արամ Համբարյան